ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

«21» մարտի 2022 թ. N 283-Ա

ք.Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎԱԾ ԿԱԹԻ ԴԻՄԱՑ ԼՐԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ կետով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել Արցախի Հանրապետությունում արտադրված կաթի դիմաց լրավճարի տրամադրման ծրագիրը՝ (այսուհետ՝ Ծրագիր) համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հաստատման պահից, իսկ դրա գործողությունը տարածվում է 2022 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա:

«Հաստատում եմ»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ ***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2022 թվականի մարտի 21-ի
N 283-Ա որոշման

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳԻՐ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԴՐՎԱԾ ԿԱԹԻ ԴԻՄԱՑ ԼՐԱՎՃԱՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2022 ԹՎԱԿԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

2. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անասնաբուծությունը հանդիսանում է գյուղատնտեսության կարևորագույն և առաջատար ճյուղերից մեկը, որը բնակչությանը պարենային ոլորտում ապահովում է կենդանական ծագման մթերքներով (միս, կաթ, ձու և այլն), իսկ արդյունաբերությանը՝ հումքով (կաշի, բուրդ, փետուր և այլն): Անասնապահական առատ և անարատ մթերքների արտադրության խնդիրը և դրա լուծմամբ պայմանավորված անասնաբուծության զարգացումը միշտ էլ եղել է գյուղատնտեսության ոլորտում իրականացվող քաղաքականության գերակայություններից:

Զարգացած անասնաբուծություն ունեցող երկրներում առանձնահատուկ ուշադրություն է դարձվում կաթի դիմաց լրավճարի տրամադրմանը, որը իրենից ներկայացնում է կաթ վերամշակող կազմակերպության կողմից ձեռք բերված կաթի արժեքի մասնակի փոխհատուցում:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն Ծրագրով կարգավորվում են Արցախի Հանրապետությունում արտադրված կաթի դիմաց լրավճարի տրամադրման հետ կապված հարաբերությունները:

2. Ծրագրում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

1) ***կաթ արտադրող*** (այսուհետ արտադրող)՝ Արցախի Հանրապետության տարածքում կաթ արտադրող ֆիզիկական կամ իրավաբանական անձ.

2) **կաթ վերամշակող** (այսուհետ վերամշակող)՝ Արցախի Հանրապետության տարածքում կաթ վերամշակող իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր.

3) ***լրավճար***՝ կաթ արտադրողի կողմից հանձնված, մեկ կիլոգրամ կաթի դիմաց տրամադրվող՝ մսուրային պահվածքի դեպքում 50 (հիսուն), իսկ մսուրաարոտային պահվածքի դեպքում 35 (երեսունհինգ) ՀՀ դրամ գումար:

2. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

3. Ծրագրի նպատակն է Արցախի Հանրապետությունում կաթի արտադրության ծավալների ավելացումը, արտադրողներին և վերամշակողներին պետական աջակցություն տրամադրելը, կաթի իրացման շուկայում գների անհիմն տատանումների բացառումը:

4. Ծրագրի խնդիրներն են՝

1) Արցախի Հանրապետությունում արտադրողների և վերամշակողների համար խթան հանդիսացող գործոնի ստեղծումը.

2) Արցախի Հանրապետությունում արտադրված կաթի իրացման ապահովումը.

3) վերամշակողներին հումքով ապահովումը և շահավետ պայմանների ստեղծումը:

3. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

5. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ նախարարություն) համակարգում և հսկողություն է իրականացնում միջոցառման իրականացման գործընթացի նկատմամբ:

6. Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված միջոցներից:

7. Նախատեսված լրավճարը տրամադրվում է միայն Արցախի Հանրապետության տարածքում կաթ վերամշակողներին՝ բացառապես Արցախի Հանրապետությունում կաթ արտադրողների կողմից մթերված կաթի դիմաց:

8. Վերամշակողները յուրաքանչյուր ամսվա համար նախարարություն են ներկայացնում տեղեկություններ մթերված կաթի, տրամադրվելիք լրավճարի և արտադրողի գործունեության մասին՝ համաձայն ձև N 1-ի՝ կցելով հանձնված կաթի դիմաց վճարումը հավաստող փաստաթղթերը՝ մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 5-ը:

9. Նախարարությունը, հիմք ընդունելով 8-րդ կետով ներկայացված տեղեկությունները, վերամշակողին է տրամադրում արտադրված կաթի դիմաց նախատեսված լրավճարի գումարը:

10. Մթերող կազմակերպությունները համապատասխան ֆինանսական միջոցները ստանալուց հետո, 5 աշխատանքային օրվա ընթացքում արտադրողներին են տրամադրում կաթի մթերման դիմաց սահմանված լրավճարի գումարը:

11. Վերահսկողության ընթացքում ի հայտ եկած խախտումների և կեղծ տեղեկատվության տրամադրման դեպքում վերամշակողները և(կամ) արտադրողները օրենքով սահմանված կարգով կենթարկվեն պատասխանատվության:

4. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

12. Արցախի Հանրապետությունում արտադրված կաթի դիմաց լրավճարի տրամադրման գործընթացի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

1) կաթի արտադրության ծավալների ավելացում.

2) կենդանիների մթերատվության մակարդակի բարձրացում.

3) բարելավված տեղական և տոհմային բարձր մթերատու հատկանիշներով օժտված տնտեսությունների ցանցի ձևավորում.

4) անասնաբուծական մթերքների ինքնաբավության մակարդակի բարձրացում:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ

Ա. ԼԱԶԱՐՅԱՆ

Ձև N 1

Տեղեկություն

_____ - ից

(Արցախի Հանրապետության տարածքում կաթ վերամշակող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ անվանումը)

հանձնված կաթի, տրամադրվող լրավճարի և արտադրողի գործունեության մասին

Հ/հ	Իրավաբանական կամ ֆիզիկական անձի անունը, ազգանունը (անվանումը)	Գործունեության վայրը (հասցեն)	Անձնագրի տվյալները, գրանցման վկայականի համարը	Հեռախոսահամարը	Տնօրինվող կովերի գլխաքանակը	Որից՝ կթու կով	Հանձնած կաթի քանակը, (կգ)	Տրամադրվող լրավճարի չափը	Ընդամենը (ՀՀ դրամ)
1									
2									
3									
4									
Ընդամենը՝									